

եաց Գլխաւորներուն զբաններ, որ « Թագաւոր Կիպրոսի եւ Երուսաղէմի »
տիտղոսը կը կրեն, բայց ոչ բնաւ « Հայաստանի » :

Ամենայն յարգանք

Նախարար

Է. Փոնցիոյ Վալլիա »

Գալով այն կարծիքին, որ իբր թէ Իտալիայի վեհապետներն իրենց
պաշտօնական գրութիւններուն մէջ « Հայոց Թագաւոր » տիտղոսն ալ
կը դործածեն, բոլորովին սխալ է : Ահա՛ թէ ինչ կը գրէ ինձ այս մասին
խաւացի հայերէնագէտ ուսուցչապետն պ. Ե. Տէցա իր 21 դեկտ. 1906 թ.
նամակով . « Վերջապէս ամենայն Իտալիայի Թագաւոր մը ունենալով, որ
մեւս բոլոր իշխանութիւններու վերջ տուաւ, այդ տիտղոսով դո՛հացաւ. եւ
Պո-ի ամուսնէն վերջան անհետացան Երուսաղէմի, Կիպրոսի, Հայաստանի
նման ամէն տեսակ պարագայ տիտղոսներ : »

Վերջացնելու համար այս խնդիրն ալ, նայնութեամբ կը զնեմ հոս
Իտալիայի արդի Վեհապետին զրկած մէկ նամակիս պատասխանը, որ մեր
խնդիրը լուսարանող անհերքելի վաւերագիր մըն է .

MINISTERO DELLA R. CASA

Sant' Anna di Valdieri, le 40 août 1907

DIVISIONE PRIMA

N° 8095

Monsieur,

Chargé de faire réponse à la requête que vous venez d'adresser à mon Auguste
Souverain, je m'empresse de vous signifier que Sa Majesté le Roi Victor Emmanuel
III fait seulement usage du titre de Roi d'Italie.

Je profite de l'opportunité pour vous assurer, Monsieur, de ma considération
distinguée.

Le Ministre de la Maison Royale d'Italie

E. PONZIO VAGLIA

Mr. K. J. Basmadjian

Officier d'Académie

Paris

9, Rue Gazan

